ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«14» հոկտեմբեր 2023 թ. N 108-Ա/1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 147-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին գործավարության կարգը հաստատելու մասին» N 147-Ա/1 հրամանի հավելվածը լրացնել նոր՝ 12-րդ գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«XII. **Նախարարության և միասնական սոցիալական ծառայության միջև իրականացվող փաստաթղթերի շարժը**

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
СЕКРЕТАРИАТ
SECRETARIAT
RA MINISTRY OF LABOUR AND SOCIAL AFFAIRS

140. Նախարարության և միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) միջև փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով ՝ առցանց եղանակով :

141. Նախարարը անձամբ հանձնարարականներ է տալիս ծառայության պետին կամ դրանք փոխանցում է գլխավոր քարտուղարի, նախարարի տեղակալների միջոցով:

142. Վարչապետի աշխատակազմից, Ազգային ժողովի պատգամավորներից, Մարդու իրավունքի պաշտպանի գրասենյակից, գլխավոր դատախազությունից, հաշվեքննիչ պալատից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված հսկողական գրությունների պատասխանները ձևավորում են նախարարության ստորաբաժանումները՝ անհրաժեշտության դեպքում սահմանված ընթացակարգով համապատասխան տեղեկատվություն և (կամ) դիրքորոշում հայցելով ծառայությունից:

143. Ծառայությունը տեղեկատվություն կամ դիրքորոշում հայցվող գրությունների ընթացքն ապահովում է գրություններով ակնկալվող ամրագրված ժամկետներում:

144. Ծառայության գործունեությանն առնչվող քաղաքացիների դիմում-բողոքների ընթացքը ապահովելու նպատակով նախարարությունը անհրաժեշտության դեպքում սահմանված ընթացակարգով տեղեկատվություն և (կամ) դիրքորոշում է հայցում ծառայությունից:

145. Նախարարի տեղակալներն իրենց համակարգման ոլորտին առնչվող գրություններն ծառայություն են ուղարկում գլխավոր քարտուղարի ստորագրությամբ՝ «Mulberry» համակարգով նախապես ամրագրելով իրենց դիրքորոշումը:

146. Նախարարության գլխավոր քարտուղարը, «Mulberry» համակարգում համապատասխան նախարարի տեղակալի դիրքորոշմամբ, ծառայության պետի տեղակալին է հասցեագրում կոնկրետ ոլորտին առնչվող տեղեկատվություն և (կամ) դիրքորոշում հայցող գրությունները:

147. Նախարարության գլխավոր քարտուղարը կամ նրա հանձնարարությամբ գլխավոր քարտուղարի տեղակալը նախարարությանն ուղղված՝ ծառայության լիազորություններին ու գործառույթներին առնչվող քաղաքացիների դիմումները, գրությունները վերահասցեագրում է ծառայության գլխավոր քարտուղարին:

148. Ծառայության պետը՝ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ծառայության դիրքորոշումը համապատասխան գրությամբ ուղարկում է նախարարին:

149. Ծառայության գլխավոր քարտուղարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ծառայության կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներին առնչվող գրություններն ուղարկում է նախարարության գլխավոր քարտուղարին:

7/14/2023

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

**Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**